



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

# ԳԵՐԲՆԱԿԱՆ ՀԻՒՆԴՈՒԹԻՒՆ

343

Գընանք. ոշխարհը, գընանք միասին,  
Կախարդենք. նորան մեր զգացմունքներով,  
Անարատ հոգով, մեր սէգ մտքերով,  
Քարոզենք անվերջ, խանդաղատագին.  
Ու շուշնչ տանք նրան, զաբթեցնենք  
նրան,  
Բերենք. վեհապանծ այս բարձունքները  
Թունաւոր Ճահճից, ցոյց տանք իսկական  
Նըշանիկ կեանքի ոսկէ զռները . . .

(Եր. 23).

ԳԻՆԸ 20 ԿՊ.



ԹԻՖԼԻՍ

Տպարան Մովսէս Վարդանեանցի

1903

891.99  
Ա-82

01 JAN 2009  
06 DEC 2010

891.99

Q-82

ԱՐԱԲԻ

ԳԵՐԲՆԱԿԱՆ 393

ՀԻՒՆԴՈՒԹԻՒՆ

1001  
945

Գլուխնեք աշխարհը, զլնանք միասին,  
Կախարդենք նորան մեր զգացմունքներով,  
Անապատ հոգով, մեր սէգ մտքերով,  
Քարոզենք անվերջ խանդաղապէն.  
Ու շունչ տանք նրան, զարթեցնենք  
նրան,  
Բերենք վեհապահծ այս բարձունքները  
Թունաւոր Ճահճից, ցոյց տանք խսկական  
նըշանիկ կերանքի ոսկէ զաները . . .

(Եր. 23).



ԹԻՓԼԻՍ  
Տպարան Մովսէս Վարդանեանցի  
1903

41 FEB 2015  
0000 330

27238

Ի Բ Վ Ա Ղ Ա Մ Ե Ռ Ի Կ

ՀԵՐԻ ՄԵԼՔԻՍԵԴԵԿ

ՏԻՐ-ՊՈՍԿԱՆԵԱՆՑԻ

Ի Հ Յ Ա Մ Ա Կ Ե Ւ

Дозволено Ценз. 12 мая 1903 г. гор. Тифлисъ.

ՀԵՂԻ ԲՈՒԼՈՒՑ:

# ԳԵՐԲՆԱԿԱՆ ՀԻՒՆԴԻԹԻՒՆ



Այնքան չէր զգացւել իմ թախծոտ հոգին.  
Կարծես իմ ամբողջ էութիւնն իսպառ  
Սնշօշափելի նիւթ էր օդային.  
Թեթև՝ սիւքի պէս, թեթև՝ ծովերի  
Ճերմակ, փաղփաղուն փրփուրի նըման.  
Ինձ թըւաց, թէ ես փշրւած գարերի-  
Մարդկային կեանքի-առասպելական  
Հերքիաթն եմ հմայիչ, զրոյցն եմ դիւթական.  
Ինձ թըւաց, թէ ես հրաշագործ քնարի  
Քաղցրաձայն լարի  
Հնչիմնն եմ անուշ, մըմունջն աննըման.  
Եւ մեղմ հովի պէս՝ սլանում եմ արագ,  
Գրտոյտ եմ զալիս  
Ողջ տիեզերքը արձակ-համարձակ,  
Միայն ճընչւած է, հիւանդ է հոգիս.  
Եւ ահա յանկարծ ես նշմարում եմ

Անհուն եթերից մի լեռու խրոխտագին  
կատարը ձիւնուտ: Իսկոյն յիշում եմ  
Չքնաղ առասպելն այդ լեռան մասին:  
Վեհ, գեղեցիկ է սուրբ բիբլիական  
Սյդ հին լեզենդան. մեզ պատմում է նա  
Պարզ ու անպանոյն, թէ ինչպէս նոյեայ  
Տապանը կանգնեց

Աստծոյ հրամանով այդ լեռան զլխին.  
Առաջին անգամ նոյը ոտք դըրեց  
Ճրհեղեղից յետ այնտեղ, ցնծագին.  
Միրուն աշխարհը տեսաւ նա նորից  
Լիռան կատարից:

Իջնում են այնտեղ:  
Թըւաց, ահա ես գունատ ու տրտում,  
Դժխեմ թախիծը կրծքիս տակ թագցրած,  
Անպսակ յոյսերով ու ձգտումներով,  
Մըտագրաղ՝ ձեռքիս զըլուխը յենած  
Կանգնած եմ տիտան Մասսի կատարին.  
Եւ հսկայական վէս բարձունքներից  
Նայում եմ հուժկու, սէգ տիեզերքին—  
Հըզօր Արարշի ստեղծագործութեան,  
Եւ չեմ կշտանում. Ու ինձ թըւում է,  
Որ նա էլ ունի մեզ նըման հոգի,  
Որ նորա կուրծքը ևս բարխում է,

Լողում է անվերջ մտքի, զդացմունքի  
Ովկիանոսի մէջ, մռայլ է մեզ նման,  
Ունի, ինչպէս մինք, սիրտմաշուկ ցաւեր,  
Բաղձալի յոյսեր ու վառ ձգտումներ  
Եւ չարչարւում է, հիւծում անսահման...  
Թըւում է, թէ իմ տրտմագին հոգին  
Տիեզերքի հետ խօսում է անվերջ,—  
Մինք ամփոփւած ենք միմեանց հոգու մէջ...  
Կախարդիչ է նա վեհ ու գեղունակ.  
Եւ համոզում եմ, որ վիհութիւնը  
Ու Աստւածային գեղեցիկութիւնը  
Մենք ճանաչում ենք սոսկ այն ժամանակ՝  
Երբ թափանցում ենք մենք մէկի հոգին  
Եւ ճանաչում ենք նորան լիովին.  
Երբ մենք փշրում ենք սրտի կողպէքը  
Խորիմաստ մտքի, զգացմունքի ուժով,  
Մտնում ենք սիրտը —նորա արժէքը  
Մենք հասկանում ենք իսկական գընով...

Դիտում եմ չքնաղ աշխարհն այնտեղից.  
Տեսնում եմ. ահա վիթխարի լեռներ  
Զով վերջալուսի ճաճանչների տակ  
Փալփլում են ուժգին, և սրբանուէր  
Արեգակն, ինչպէս անբիծ լոյս—հրեշտակ՝  
Ժպտում է նըրանց հուրհուրատելով,

Փարում, փաղաքշում իր վառ չողերով...  
Գեղանի լեռներ.

Նոքա կազմելով տիտան շղթաներ՝  
Փռւած են խառնակ, դէպ' անծայր հեռուն.  
Եւ վէս լեռների շիթերը փրփրուն՝  
Գոռ բարձունքներից հոսում են արագ  
Խուլ աղմուկներով գահավիժելով,  
Եւ վըշվարշալով կատղած, համարձակ  
Ցործանք են տալիս և վազում, գընում  
Միրուն լըճերի, սիրուն ծովերի  
Մայրական գրկում հանդիսատ որոնում...

Տեսնում եմ անթիւ շլքեղ հովիտներ  
Պըճնւած փարթամ այգեստաններով  
Ու ճոխ, երփներանդ բուսական թիւնով.  
Մըթին ծործոններ, անթիւ բըլուններ  
Այստեղ ու այստեղ անկարդ շըռայլած,  
Բիւր շէն-աւաններ՝ խառնիխուռն փուած  
Կամ ծաղկափըթիթ վառ հովիտներում,  
Կամ բլըի գլխին, սարերի լանջին,  
Կարծը ժայռերի ըստորոտներում...  
Վէճ են ու գրաւիչ այդ սէգ լեռները,  
Այդ գեղադալար դաշտ-դուրանները.  
Նոքա ծնեցնում են մարդու մէջ մտքեր,  
Վառում կըծըի տակ տենչեր ու յոյզեր...

Զգում եմ, որ այն  
Բազմաթիւ չնչին անյարդները  
Թումբերն են միայն  
Որ այն մութ-կանաչ թաւիչն անպատճառ  
Թաւ անտառներն են շլքեղադալար, —  
Թուխ ու շիկագոյն շղաքշը գեղանի  
Հասկերն են մատաղ զարու, ցորենի...  
Եւ հիանում եմ թախծոտ հրճւանքով.  
Կարծես վիթխարի  
Այդ տեսարանը հրզօր հանճարի  
Վըճինով քաշած մի վըսեմափառ  
Գործէ գերազանց, կենդանի նըկար՝  
Որի վրայ գոյնները չեն դասաւորւած,  
Այլ խառնակ-խառնակ ցրւած են անվերջ.  
Բայց այդ ներկերի խառնակութեան մէջ  
Զգում եմ այնպիսի յափշտակութիւն,  
Որ ես նայելուց՝ բնաւ չեմ կշտանում..

Նստում եմ այստեղ և երկար նայում.  
Միտքս ոլանում է զնդակից արագ,  
Ինչպէս հուը-կայծակ,  
Բայց ոչ մի տեղի բնաւ չէ հասնում...  
Ու ինձ թըլում է, — եթէ նայէի  
Ես հագարաւոր ու խըլըստ դարեր,  
Եւ միտքս սլանար՝ դարձեալ չէր հասնի

Եւ ոչ մի տեղի, — կըշարունակէք  
Սնվեց, անընդհատ յառաջ ընթանալ,  
Մըրնթաց գընալ...

Դգում եմ հոգիս սեկմում է; զրկում  
Ողջ տիեզերքը իր փոքրիկ խորքում...  
Բայց ես նորա մէջ  
Զգում եմ միայն խորին տիսրութեան  
Կըրակը անչէջ...  
Մտքիս թըռիչքը, հոգուս զգացումը,  
Ոնհուն ձգտումը,

Գեղեցկութիւնը Տիրոջ սքանչելի  
Մտեղծագործութեան մաշում են ուժդին  
Իմ թախծոտ կուրծքը ու անպատմելի  
Ճնշում են սիրտըս. մի գերմարդկային  
Փղձուկ է տիրում իմ մըռայլ հոգուն,—  
Ես վշտանում եմ անյայտ պատճառով. .  
Եւ ահա յանկարծ այդ կախարդական  
Հոգեզմայլութիւնը վեհ տեսարանի  
Առիթ է տալիս ինձ մայլ դիւթական,  
Նրա պէս գեղանի  
Աշխարհի մասին խորհելու լոին...  
Ես մոռանում եմ վեհ տիեզերքը  
Եւ խորհրդաւոր և մեղմահնչին  
Նորա քնքուշիկ, սըբազան երգը,

Որ այնքան մօտ է իմ տանջւած հոգուն—  
Լութիւնը... ահա մի սըբանուէք  
Անուշ ու վեհ երգ, որի մէջ սնւած  
Ու կան փայփայած շատ ոսկէ յոյսեր,  
Վսեմ հնչիւններ խիզախս, վեհապանձ  
Մտքի, զգացմունքի և անթիւ ձգտմանց...  
Ես մոռանում եմ այդ երգը գաղտնի.  
Եւ պատանեկան իմ ցնորքն անգին  
Հարաւի վայրագ ժպիտը շրթսւնքին՝  
Ցօլուն աշերով, գանգուը մազերով  
Պատկերանում է առաջիս մենակ.  
Սիգաճեմ, քնքուշ, ինչպէս երկնային  
Ոնարատ հըեշտակ...

Նա մի աղջիկ է, որին ես երկար  
Ծանը տարիներ սիրում եմ ուժգին,  
Եւ որի մասին խօսելու համար,  
Պատմելու նորա վեհ, լիակատար  
Գեղեցկութիւնը

Եւ լլջութիւնը, խելօքութիւնը՝  
Պէտք է սաւառնել հուժկու, վառվըռուն  
Մտքի թըռիչքով չքնաղ Հելլադան  
Եւ Հելլենացու բոցեղին, անհուն  
Մտքի թըռիցքով երկակայիկ  
Այն չընաշխարհիկ և վայելակազմ

Դիցուհիներին ու նիմֆաներին,  
Որոնք ձիգ դարեր հանդիսացել են  
Մարդկային մտքի և զգացմունքների  
Առաջնորդողներ, տիրապետել են  
Մարդկային հոգուն, ազգել լիովին  
Առօրեայ կեանքում, բիւր գործերի մէջ  
Դէպ' ճշմարիտը, վսեմն ու բարին ..

Թըւում է, թէ նա հով է չնկշնկող,  
Որ միշտ սուրում է կանաշ զաշտելում.  
Թէ նա սըբազան Փէրի է դիւթող,  
Որ միշտ ապրում է ջրերի խորքում...  
Թըւում է, թէ նա բնութիւնն է զուգւած,  
Կամ քնքուշ Ֆլորան շըթունքներն անբիծ.  
Թըւում է, թէ նա ցողից է ծնւած,  
Կամ թէ կարկաշիւն առւի փրփուրից.  
Թըւում է, թէ նա ողջ տիեզերի  
Կախարդ ողին է, ժըպիտը դէմքին.  
Մարդկանց, բլնութեան, հոգուս, երկնքի  
Սուրբ, երանաւէտ, հրզօր դիցուհին...  
Թըւում է, թէ նա զաղափարս է իմ,  
Ներդաշնակութիւնն զդացմունքիս, մտքիս,  
Թէ նա անմեկին ընկերս է մտերիմ,  
Փարոսը կեանքիս..  
Զգացւած՝ զըլուխս յինած մի ձեռքիս..

Նայում եմ ներքե, Մասսի ստորոտի  
Մօտով համընթաց, լըռիկ անցնելիս  
Սըգաւոր դետին, որ օձապտոյտ  
Յառաջ է սահում, հին-հին դարերի  
Դը փառքը կորցրած՝ տխուր և անգութ  
Ներկայ դժնդակ ժամանակների  
Ճան է տանում վշտու ու տըտում...  
Արաքսն եմ տեսնում.  
Տըտմագին հոգով իմ սըտի խորքում  
Բարե եմ տալիս այդ այրի գետին...  
Նայում եմ նորա պճնազարդ հովտին.  
Այնտեղ հոյակապ կայ մի ապարանք,  
Որի չորս կողմը, պատնէշների տեղ,  
Ջըջապատած են պարթեանասակ  
Ու արքայ-ծտոեր, և սիրոնազեղ  
Բուրիշ ծալիկներ կազմում են նորա  
Ճոխ զարդարանքը... սիրուն մարմարեայ  
Մեծ շատրուանը ծաղկանոցի մէջ  
Ցայտում է դէպ վեր,  
Փշըւում, զառնում բիւրեղիկ շիթեր,  
Յորդ սըսկելով տերե ու ծաղիկ...  
Բլբուլն այնտեղ անուշ ու քաղցրիկ  
Երդ է գեղգեղում մինչև առաւօտ,  
Եւ մօտիկ լըճի  
Թեթև գիփիւռը, գերթ շարաձըճի

Կայտառ թիթեռնիկ, կամ անհոգ թռչնիկ՝  
Սուրում է այնտեղ, ծաղիկների հետ  
Խաղում բերկրամիտ և մեղմիկ-մեղմիկ  
Պաշտալիս նըրանց, պաշտոնում, փախչում.  
Ահա բըլուրը՝ դալար, թաւշապատ.  
Բլրի կատարին կանգնած է մենակ  
Մեծ ապարանքը՝ վիրքուն ու հըպարտ...  
Ոլտեղ ապրում է իմ սիրած, պաշտած  
δընորք—դիցուհին :

Նայում եմ տիսուր  
Այն նուիրական սէգ ապարանքին,  
Մըտածում եմ լուռ.  
Սէրն էլ մի պատիժ է ծանր ու սոսկալի –  
Անգութի նըման ձգում է նա մեզ  
Գոռ ովկիանոսը բիւր տանջանքների  
Ու մեր ընքուշիկ սիրտը նա այնպէս  
Կրծում է անիմնայ... քամում է իսպառ  
Արիւնը մեզնից, մեր սիրտն է խըրում  
Իր մագիլները, անողորմաբար  
Մեղ խոր, մահացու վէրքեր հասցընում...  
Տաժանելի է... քանզի ես այնքան  
Սիրում եմ նորան.  
Այնքան լուրջ է նա, ու այնքան սիրուն.

Նորա անսովոր գեղեցկութիւնը  
Այնքան մօտ է իմ սրտին ու հոգուն,  
Որ սարսափում եմ տեսնելով հեռու  
Ինձնից այնպիսի մի անգին էակ՝  
Որին նայելով ըմբոստ ու խոհուն  
Անաստուածն անգամ կըպաշտէր ուժգին,  
Կըտեսնէր նորա շընաղ, սիրասուն  
Գեղեցկութեան մէջ մի թովիշ եղեմ  
Եւ կըճանաշէր կորցըրած Աստըծուն.  
Եւ մեղայ գալով նա կը համոզւէր՝  
Որ մեծ գանգն անգամ կարող է սխալւել,  
Ճփոթւել շարաշար՝  
Երբ նա չէ տեսած մաքուր, անապակ  
Գեղեցկութիւնը իր հըմայըներով...  
Եւ կը գիտենար նա այն ժամանակ՝  
Ուր կայ իսկական սուրբ գեղեցկութիւն  
Այնտեղ կայ Աստւած. քանզի այդպիսի  
Գեղեցկութիւնը ունի իսկական  
Վեհ կերպարանքը նախախնամութեան...

Մըտածում եմ լուռ.

Ես գեղեցիկ եմ, հըաշալի աղջիկ,  
Հպարտ ու ազգու պատանի եմ ես.  
Միթէ իսկապէս չես սիրում դու ինձ.  
Եւ կամ թէ ինչո՞ւ շըպիտի սիրես...

— ՎԵՆ խելօք ևմ ես  
եւ բարձր՝ կեանքի ախտոտ ժըխորից,  
Ուր թաւալւած են մարդիկ անզգայ  
չեռու՝ իսկական ու վայել կեանքից,  
Բարքերը բթացած՝ վատնում են անխնայ  
Բիւր բարիքները նախախնամութեան,  
Ապրում են շըռայլ, ճոխ ու անվայել,  
Անձնատուր եղած անառակութեան.  
Որոնց մէջ շըկայ աւիւն ապերելու  
Ճշմարիտ կեանքով, և որոնք չունին  
ՎԵՆ երազանքի փոթորիկ, կըակ,  
Եւ ազնիւ սրտի իղձ, յայս ու փափագ...

Իմ մէջ ապրում է կեանք իսկական.  
Ես թագաւոր եմ վեն, հսկայական  
Գաղափարների, վառ ձգումների,  
Սյլ է պատճառը իմ տանջանքների.  
Ես բնաւ չեմ տանջում, ինչպէս հէտ մարդիկ  
Խոր խայթւած խղճից.  
Ոհ, ասա, միթէ չես սիրում դու ինձ...  
.

Եւ ահա յանկարծ՝ այս մըտածմունքի,  
Ահեղ տանջանքի ու պաղատանքի  
Սրտամաշ ժամին լըսում եմ անուշ  
Ու թովիչ մի ձայն, որ ծաղկադաւար

— 17 —  
7/11 1922

Դեղ հովիտներից խուլ հնչխննելով  
Արձագանքում էր թախօսու, միայաք  
Զանգակի տխուը զօղանչի նըման,  
Ու քնքուշ քամին նըան խըլելով՝  
Դէպ' ինձ էր բերում մեղմ շշնչալով...  
Աստուած, իմ Աստուած... ես մինչև այսօր  
Դեռ չեմ մոռացել այդ ձայնն անուշիկ.  
Հէնց այս ըոպէիս նոյն խորհրդաւոր  
Քաղցը ուժգնութեամբ հնչում է քաղցըիկ  
Ականջներիս մէջ, և ըզգում եմ ես  
Մի ֆիզիքական խորին թուլութիւն,  
Քայքայւում են իմ չղերը... կարծես՝  
Վառում է հոգիս, յուզլում, փոթորկում:

Այդպէս՝ վշտերզի լալուկ ձայնի պէս՝  
Քաղցը ու ելերուն ելեջներով՝  
Հեռու ներքեկից լուռ լսում եմ ես  
Աննըման ձայնը խորին զմայլանքով.  
Բաղխում է սիրած արագ խփելով,  
Թըւում է, թէ նա ինձ վազուց ծանօթ  
Չայն է մայրենի քաղցըախօս մի ձայն,  
Ոը այնքան մօտ է հոգուս ըզգացման...  
Օ՛, ես նորա մէջ խոր լըսում էի  
Ողջ տիհզերքի խօսքըն ու երգը,  
Կարծես զզում նորա ցաւըն ու վէրըը,

Հասկանում երկնի գաղտնիքը վսեմ,  
Բընութեան լեզուն ու խորհուրդները,  
Ճշմարիտ սիրոյ տրտոնցքը դժխմ,  
Նորա սոսկալի գալարումները.  
Երազանքն ու տենչ, անձկալի փափադ,  
Ոսկէշող յօյսեր, աւիւն և կըբակ,  
Ու այն ամենը, ինչ որ յատուկ է  
Վեհ ու շնորհալի ազնիւ սրտերին...  
Զգում եմ. ահա նա քանի գընում  
Սյնքան աւելի յատակ է հնչում.  
Կարծես ծաղկազարդ վառ հովիտներից  
Բարձրանում է նա աստիճանաբար,  
Ու ես լըսում եմ աւելի մօտ'կից...  
Գալիս է դէպ՝ ինձ, դէպ՝ վեր է թռչում  
Ջուտափոյթ, անահ... աւելի դիւժիչ,  
Սւելի զօրեղ ելմէջներով,  
Եւ Աստուածային յատկութիւնները,  
Եւ թմրած հողու ըզզայութիւնը  
Իսկոյն զարթեցնող, իսկոյն կեանք տուող...  
  
Մի եղեմական ձայն է հրաշալի,  
Որ տենչող հոգու ու հըգօր մտքի  
Անհուն թըռիչքի գերբնական ուժով  
Հաղիւ է կարող մարդ հողածինը  
Զգալ ու դիւժւել և մարդկայինը

Ողջ մոռանալով՝ ապրել գէթ քանի  
Հնչին վայրկեաններ, ապրել լոկ հոգով...  
Ծանօթ էր նա ինձ. պաշտելի մի ձայն,  
Որ չ'զիտեմ, արդեօք, ո՞րտեղ եմ լըսել.  
Իոլ ու լըռելայն  
Խաւարի միջին կէս-զիշերային,  
Թէ վատթար, դաժան իրականութեան  
Դըժոխք-աշխարհում. կրակի պէս վառվուն  
Երկակայութեան արդիւնքն է եղել  
Հզգացւած պահուն,  
Լըսեմ եմ արդեօք ես ըընած ժամին  
Սին, ցընորամիտ երազների մէջ.  
Երկնային էր այն, թէ չէ՝ երկնային՝  
Հըդիտեմ բնաւ... ես գիտեմ միայն,  
որ լըսել եմ այն..  
Թովշական ձայնի ցնցող հնչիւններ,  
Որոնք ապրել են իմ հոգու խորքում.  
Որոնց հրապուրիչ ու սիրանուէր  
Ազգեցութիւնը իմ տանջւած կրծքում  
Չէ մարել երբէք. այլ տարինների  
Երկար ընթացքում ուժեղանալով  
Դերել է հոգիս, իր ճիրանների  
Քաղցը ճնշիւնով

Ինձ կաշկանդել է, կախարդել իսպառ  
Եւ իմ սեփական, իմ տիեզերքի  
Իշխանը դարձել...

Հնչւում է անուշ, ձիգ ու միալար,  
Սյնպէս յուսահատ ու աղէկոտոր...  
Ես ըզգում էի նորա մէջ երկար  
Ծանը տարիներ կըրած տանջանքներ,  
Արցունք, հեծեծանք, սոսկալի վշտեր...

Սիրաս հալում է հիւանդ կըծքիս տակ.  
Հեռում եմ ուժգին... յառում եմ անյագ  
Աչքերը ներքեւ ապուշ, քարացած.  
Տեսնում եմ. ահա մէկը ներքեկց  
Վեր է բարձրանում անվախ, սըրնթաց  
Դէպ' ծերուկ Մասսի գըլուխը, դէպ' ինձ...  
Նայում եմ երկար և չեմ հաւատում.  
Սսել անսովոր երեսյթ է նա,  
Գեղ հաւէրժահարս, բնութեան անմահ  
Քաջարի ոգի՝ հասակն աննըման,  
Կամ թէ չէ՝ թշուառ խեղճ մահկանացու՝  
Սյդ միննոյն է. սակայն ինձ ծանօթ  
Գեղանի հասակ ու կախարդ, ազդու  
Դէմքի գծագրութիւն...

Դժգոյն ու երկշոտ

Նայում եմ նորան. ես երերում եմ...  
Երկիրը զլխիս պտոյտ է գալիս,  
Մթնում ամեն ինչ. ահա տեսնում եմ  
Երկինքը ներքեւ, երկիրը վերե...

Նա է. մի թոյլ կին՝  
Որ իր երկնային գեղեցկութիւնով  
Գերել է սիրտը. մի փոքրիկ մարմին,  
Որին սառնօրէն համեմատելով

Սէգ տիեզերքի,  
Մարդկային գանգի խորհրդածութեան,  
Մտքի թըռիչքի  
Եւ զգացմոնքների անհուն խորութեան  
Հսկայութեան հետ՝ թըռում է այնքան  
Հնչին, աննըշան... բայց այդ մարմինը  
Այնպիսէ դադտնի հըմայքներ ունի՝  
Որ սառն մտքի, խոհականութեան  
Վըճիոըն անդամ մի թունդ հարուածով  
2է կարողանում շանթել յաւիտեան,  
Տապալել գիտնին և կըծու ծաղրով  
Անվըդով ասել «Արժէ տառապել  
Այսպիսի փոքրիկ գոյութեան համար...»  
Եւ միշտ հիւծւելով՝ ձգտել աւելի  
Հսկայ բաների...  
Նա է... պաշտելի այն ծաղիկը վառ,

Որի յետեից տարիներ ընկած՝  
Աշխատում էի առմիջտ իւրացնել.  
Որի շուրջն էին պըտըտում մաշւած  
Հողիս ու միտքս... Յ՛, նա համարձակ  
Դալիս է ըշտափ, դէպ' վեր է ձգտում,  
Դէպ' ինձ է վազում, և սիրատենչակ,  
Տիրալուը ձայնով յուզում ու շարժում  
Մրտիս թելերը... ևս դոզողում եմ...  
«Իմ սի՞րտ, իմ հոգի, իմ իշխան, իմ տէր,  
«Եյնքան քեզ համար տառապել եմ ևս  
«Ու այնքան տանջւել... իմ անդին ընկեր.  
«Երկար տարիներ ըսպասել եմ քեզ.  
«Ես դիշերները աղօթում էի  
«Քեզ համար անըուն. ես կարօտագին  
«Կանչում էի քեզ, պաղատում էի,  
«Որ շնուտ գաս ինձ մօտ. ընկեր թանգարին,  
«Ամեն մի վայրկեան դու խօսում էիր  
«Ինձ հետ, ինձ կանչում... ասա, ուր էիր...  
«Դու շէիր տալիս ինձ հանգստութիւն,  
«Քո պատկերը միշտ առաջիս կանգնած՝  
«Լուռ ինձ էր նայում դունատ ու տրտում...  
«Դու տեսնում էիր ինձ ամենուրեք,  
«Բայց շէիր գալիս ինձ մօտ... վերջապէս՝  
«Յոյսը կբարելով քեզմից՝ վշտարէկ,  
«Ես լինքս եմ ձկտում հասնելի հազնել քեզ».

«Անահ բարձրանալ այս բարձրութիւնը,  
«Որի վրայ այժմ լուռ կանգնած ես դու.  
«Ինչքան վեհ է քո իշխանութիւնը,  
«Ինչքան վեհ ես դու...  
Եյսպիսի քաղցրիկ ու սիրտ կտըրտող  
Թախծախօս երգով նա վազեց դէպ ինձ.  
Յանկարծ համակեց մի սարսափ, մի զող  
իմ ողջ մարմինը... թռթըռաց հոգիս...  
Դոզողոզուն ձայնով պատասխանեցի  
«Դու ասացիր այն, ինչ որ ես էի  
Ուզում քեզ ասել. խօսեցիր սըտիս  
Վիրաւոր խորքից .., ես ոչինչ չունիմ  
ել քեզ ասելու...» Այժմ, սիրելիս,  
Գընանք աշխարհը, գընանք միասին,  
Ճշմեցնենք նրան մեր զգացմունքներով,  
Անարատ հոգով, մեր սէզ մտքերով,  
Քարոզենք անվերջ, խանդաղատագին  
» Ու շնուշ տանք նրան, զարթեցնենք նրան,  
Քերենք վեհապանծ այս բարձունքները  
Թունաւոր ճահճից, ցնց տանք իսկական  
Երջանիկ կեանքի ոսկէ դոները...  
Միզ ձօնւած բախտի ժպիտը սիրավառ  
Երկնքից առաքւած պարտք է մեզ համար՝  
Սուրբ, անքակտելի»; Մենք երերւելով  
Մի կերպ մօտեցանք և ուժգին, ուժգին.

Դրկեցինք իրար. բայց սիրոյ խորին  
Անուշ գոգիոի աըբեցութիւնից  
Ու բաղցրութիւնից՝ մեզ անպատմելի  
Թուլութիւն պատեց... զլատւեց երկուսիս  
Ոյժերն իսպառ, աչքերը մըթնեց,  
Եւ ուշքը զընաց մենք իրար գըկած՝  
Յանկարծ զլորւեցինք գոռ, բերանաբած  
Լարիինթոսը խորխորատների  
Եւ սառսուռ ազդող մութ անդունդների.  
Անկսկիծ, անցաւ... Յետոյ ինչ եղաւ՝  
26մ յիշում բընաւ...

Այն ինչ որ ունի միայն գոյութիւն  
Մարդու դանգի մէջ՝ ծաղրի է մատնւած.  
Նրան չեմ ասում իրականութիւն,  
Այլ ունայն ցնորք, խաբուսիկ երագ...  
Բայց այդ ցնորքները, սին երազները  
Սպրել են յաւէրժ մարդկային գլխում  
Եւ եթէ նոքա դարեր հալածւին—  
Դեռ ապրելու են երկար, անդադրում  
Մինչ մարդս ապրում է երկրի երեսին...  
Մարդիկ առանց այդ վեհ ցնորքների  
Նման են միայն կենդանիների...  
Մարդիկ ձգտում են դէպ՝ դիւթականը  
Դէպի հրաշալին, մաքուրն ու բարին

Եւ աշխատում են ժանտ իրականը  
Տեսնել միշտ պայծառ, միշտ վեհ, ժպտագին։  
Բայց ինչ որ ունի միայն գոյութիւն  
Մարդու դանգի մէջ՝ ծաղրի է մատնւած.  
Նրան ասում են սոսկ հիւանդութիւն,

Կամ զատարկ երազ.

Եւ զարմանք չէր այն՝ երբ ես սենեակում  
Իմ մարդկայինը ողջ մոռանալով՝  
Մի քանի ըոպէ ապրեցայ հոգով  
Մտքի, զգացմունքի թոփիշ աշխարհում...  
Այն ինչ որ միայն տեղի ունեցաւ  
Ինձ հետ ալեոր Մասսի կատարին՝  
Սենեակումս էր սոսկ... ինձ տնացիք գտան  
Ուշաթափ փուած յատակի վրայ.  
Օգնութեան կանչած բժշկից նոքա  
Եյսքանն իմացան.—Լոկ ֆիզիքական  
Տըկարութիւնից յառաջ է եկել

Ուշագնացութիւն.

Եյլապէս այդպիսի մի հիւանդութիւն  
Կարող է կոշւել սոսկ Գերբզնութեան...



ՀՀ Ազգային գրադարան



NL0321662

2.1238